**EMPLOYMENT DEVELOPMENT DEPARTMENT**
**PO BOX 2530**
**RANCHO CORDOVA, CA 95741-2530**

**EDD ԱՆՎՃԱՐ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝ 1-866-401-2849**

# ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

**(Ներկայացրեք պատճենները, եթե այլ բան նշված չէ)**

Դուք պետք է ներկայացնեք **ՄԵԿ** փաստաթուղթ **«Լուսանկարով նույնականացման փաստաթուղթ»** բաժնից **ԵՎ** առնվազն **ՄԵԿ** փաստաթուղթ **«Նույնականացման այլ փաստաթղթեր»** բաժնից։ Ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է պատճենվեն **8 ½ x 11 դյույմ թղթի** վրա և յուրաքանչյուր էջի վրա պետք է ներառեն Ձեր Սոցիալական ապահովության համարը (Social Security number, SSN)։

## Լուսանկարով նույնականացման փաստաթուղթ

Տրամադրեք պարզ և ընթերցելի պատճենը նահանգային, տեղական կամ դաշնային գործակալության կողմից տրամադրված հետևյալ փաստաթղթերից **ՄԵԿԻ**, որտեղ կան Ձեր անունը, ծննդյան ամսաթիվը և Ձեր լուսանկարը՝

- Վարորդական իրավունքի վկայական կամ անձը հաստատող (ID) քարտ
- ԱՄՆ անձնագիր **ԿԱՄ** ԱՄՆ անձնագրի քարտ
- Օտարերկրյա վավեր անձնագիր
- ԱՄՆ զինվորականի քարտ (դիմացի և հետևի կողմերը)։
- Զինվորականի կախյալի ID քարտ (դիմացի և հետևի կողմերը)
- Աշխատանքի թույլտվության փաստաթուղթ՝ տրամադրված ԱՄՆ Քաղաքացիության և ներգաղթի ծառայությունների (USCIS) կողմից *(USCIS Ձև I-766)*
- Քաղաքացիության վկայական *(USCIS Ձև N-600)*
- Հպատակագրման վկայական *(USCIS Ձև N-550)*
- Մշտաբնակի քարտ կամ Օտարերկրացու գրանցման քարտ *(USCIS Ձև I-551)*

## Նույնականացման այլ փաստաթղթեր

Տրամադրեք հետևյալ փաստաթղթերից առնվազն **ՄԵԿԻ** պարզ և ընթեռնելի պատճենը կամ բնօրինակը՝

**Զբաղվածության մասին տվյալներ**

- Առնվազն մեկ W-2-ի պատճեն, որը Ձեզ տրամադրվել է վերջին տարվա ընթացքում, **կամ**
- Նախապես տպված աշխատավարձի վճարման անդորրագրի կամ վճարման հայտարարագրի առնվազն մեկ պատճեն՝ տրված Ձեզ Ձեր գործատուի կողմից առաջին անգամ հայց ներկայացնելու ամսաթվին նախորդող տասներկու ամսվա ընթացքում, որը կպարունակի հետևյալը՝
  - Ձեր անունը (կամ անվան սկզբնատառը) և ազգանունը, **և** SSN (առնվազն 4 նիշ) կամ Ձեր աշխատողի նույնականացման համարը, **և** գործատուի անունը, **և** վճարման ժամկետի ամսաթվերը կամ աշխատավարձի վճարման անդորրագրի կամ վճարման հայտարարագրի ամսաթիվը։

**ԿԱՄ**

**Հասցեի հաստատում** (ներառում է Ձեր **անունը** և ներկայիս **բնակության** հասցեն)

- Կոմունալ ծառայության հաշվի (էլեկտրականություն, գազ, աղբ, ջուր կամ կոյուղի), կաբելային TV հաշվի, հեռախոսի հաշվի, բանկային քաղվածքի, անշարժ գույքի հաշվի, հիպոթեքային վարկի քաղվածքի կամ ընթացիկ և ամբողջական վարձակալության պայմանագրի չփոփոխված պատճեն, **կամ**
- Փոստային բաժանմունքի արկղի կամ մասնավոր փոստարկղի՝ որպես վարձակալ/լիազորված օգտագործող գրանցման հաստատման պատճեն։

**ԿԱՄ**

**Սոցիալական ապահովության համարի հաստատում** *(Սոցիալական ապահովության քարտը ՉԻ բավարարի այս պահանջը)*:

- Ձեր ***Սոցիալական ապահովության հայտարարագրի*** ամբողջական պատճեն (էջ 1, 2 և 3), որը մատչելի է առցանց՝ **socialsecurity.gov/myaccount** հասցեով **կամ**
- Բնօրինակ ծանուցում երրորդ կողմին Սոցիալական ապահովության համարի նշանակման մասին (*SSA Ձև 7028*); **կամ**
- Սոցիալական ապահովության նպաստների վերաբերյալ գաղտնի տեղեկությունների բնօրինակ զեկույց (*SSA Ձև 2458*):

**ԿԱՄ**

**Ծննդյան ամսաթվի հաստատում**

- Պաշտոնական ծննդյան վկայականի՝ տրված տեղական, նահանգային կամ դաշնային գործակալության կամ օտարերկրյա կառավարության կողմի կամ Ձեր ծննդյան մասին այլ պաշտոնական վկայականի պատճեն: «Տեղեկություն, անձը հաստատելու համար անվավեր փաստաթուղթ» նշումով ծննդյան վկայականն ընդունելի հաստատում չէ: Ծննդյան վկայականի միայն պաշտոնական թարգմանությունը ծննդյան ամսաթվի հաստատման ընդունելի փաստաթուղթ չէ: Պաշտոնական թարգմանությանը պետք է կցված լինի պաշտոնական ծննդյան վկայականը: